

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՔԱՂԱՔ

\*\*\*

ՔԱՂԱՔԻ ՄՐԳԻ ԿԱՌԱՋԱՎԱՐ ՎԵՀ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Ա.

### Հայրապետական տնօղինութիւնք.

Կանգակ յանուն Սիմէօն ա. քահանայի Ստեփանոս  
սեանց, որով տուաւ արտօնէութիւն առնել մասնաւոր  
հանդանակութիւն ի հայրենակիցան։ Թ. 961.

— Յանուն Առաջնորդին Վրաստանի, որով արտօնեւ-  
ցաւ թոյլ տալ Սուլթանայ Գրիգորեան մտանել ի նոր  
ամուսնութիւն։ Թ. 974.

— Յանուն Յուսիկ Արքեպիսկոպոսի, որով արտօնեւ-  
ցաւ նմա արձակուրդ ց1-ն սեպտ. վասն ապաքինութեան  
գնալ ի բուժավայրս։ Թ. 975.

— Յանուն Գէորգ Արքեպիսկոպոսի, որով պատուիւ-  
րեցաւ նմա առնել ժողով մասնակցութեամբ անդամոց  
Սինոդի և ձեռնհաս միաբանից ընդ նախագահութեամբ  
խորվ վասն կարգադրութեան գործոյ ճեմարանի։ Թ. 976.

— Յանուն Առաջնորդին Հայոց Վրաստանի, որով  
պատուիրեցաւ ի տարւոջ առնել միջնորդութիւն միայն  
վասն հնգից քահանայից ի թեմին ի պարգև կամիլաւկայի  
կամ լանջախաչի և յիւրաքանչիւր յեկեղեցւոյ ունել ոչ  
առաւել քան զմի աւագ քահանայ։ Թ. 991.

— Յանուն առաջնորդացն Բեսարիոյ, Շամախւոյ և  
Երեանայ ի նոյն միտու։ Թ. 1000. 1019. 1020.

— Յանուն Սինոդի Ա. Էջմիածնի, որով պատուիրեւ-

ցաւ կարճել դտուչութիւն ռոճկի ցվախճան քննութեան գործոց Խորենայ վրդ. Լազարեան. թ. 1003.

— Յանուն Ընձակ վարդապետի, որով կարգի ժամանակաւոր վարիչ փոխանորդական վիճակին Միւնեաց և փոխ վանահայր Տաթեռու. թ. 1011.

— Յանուն Հոգաբարձութեան Մարիամեան Յովիսաւնեան գործոցին, որով հաստատեցաւ Տիգրան Ռաշմանեան ի տեսուչ. թ. 1016.

— Յանուն Հոգաբարձութեան թեմ. գործոցին Ն. Նախիջեանի, որով Երուանդ Շահաղիզեան հաստատեցաւ ի տեսուչ. թ. 1017.

— Յանուն թեմ. Խորհրդոյն ի Դաւրէժ, որով պատուիրեցաւ նախագահութեամբ Գարեգին քահանայի վարել զգործ վիճակին զկնի մեկնելոյ Եզնկայ Արքեպիսկոպոսի. թ. 1022.

— Յանուն Տ. Մարգիս եպիսկոպոսի Սևանայ, որով պատուիրի ձեռնադրել զԱղեքուանդը Տ. Գրիգորեան քահանայ կարկածան գեղջ. թ. 1025.

— Յանուն Հոգաբարձութեան Ներսիսեան Հոգեորդ գպարանոցի, որով պատուիրի տալ կենսաթոշակ Երուանդայ Լալայեան առ տարին 600 ռուբլիս. թ. 1026.

— Յանուն Տ. Եփրեմ վարդապետի, որով պատուիրեցաւ տալ նպաստ 200 ռուբլիս Խորէն վարդապետի Մուրադբէգեան թ. 1038.

— Յանուն Տ. Մեսրովը Արքեպիսկոպոսի, որով պատուիրեցաւ ձեռնադրել ի քահանայ զՄերոբէ Մուտճեան թ. 1041.

— Յանուն Տ. Յուսիկ վարդապետի, որով կոչեցաւ ի պաշտօն գիւանապետութեան. թ. 1043.

— Յանուն Ամենապատիւ պատրիարքացն Կ. Պոլսոյ

և Երուսաղիմի՝ ի ցուցանել աջակցութիւն քարոյական Տ. Արքար ա. քահանային թ. թ. 1044, 1045.

— Յանուն փոխ թեմակալին Երևանայ վասն կարգելոյ զիորէն վրդ. Մուրատբէգեան ի գործակալ Նոր Բայաղիտուս թ. 1080.

— Յանուն փոխ թեմակալին Երևանայ վասն առնելոյ ընտրութիւն նորոյ փոխանորդի վիճակին Հ. նախիշիանի թ. 1081.

— Յանուն Կոնսիստորիային Աստրախանի, որով պատուիրի առնել ընտրութիւն նորոյ փոխանորդի վիճակին Դղլարուս թ. 1100.

— Յանուն փոխ թեմակալին Երևանայ՝ որով լուծձան և վերստին հաստատեցան միութիւնն քահանայից, որ յԵրևան թ. թ. 1013, 1103.

— Յանուն Ա. Սինոդին, որով պատուիրեցաւ տալ Մեսրոբայ Արքեպիսկոպոսի կիսամեայ ոռծիկ ի գնալ յԵրուսաղէմ. թ. 1123.

— Յանուն քահանայից շրջանին Կոտայից, որով հաստատի կանոնադրութիւն քահանայական միութեան. թ. 1134.

— Յանուն Կոնսիստորիային Աստրախանի, որով կարգեցաւ Ներսէս վրդ. Մելք-Թանգեան նախանդամ Կոնսիստորիային. թ. 1159.

— Յանուն Առաջնորդին Ղարաբաղի վասն տնօրինենելոց զվիճակ Մարիամեան օրիորդաց գպրոցին ըստ հայեցողութեան իւրում. թ. 1176.

## Բ.

Հայրապետական գոհունակութիւնք և օրհնութիւնք.

Կոնդակ օրհնութեան յանուն որբախնամ՝ ընկերութեան Հայուհեաց Հարթֆըրտ քաղաքի վասն նուիրաբերելոյ ի նպաստ որբանոցին Սալնապատու Վանայ 100 ռ. թ. 954.

— Օրհնութեան յանուն վարչութեան Հայուհեաց որբախնամ՝ ընկերութեան Տփխեաց թ. 1048.

— Օրհնութեան յանուն Միսաքայ Այուազեան վասն 42 ռ. հանգանակութեան, թ. 1123.

— Օրհնութեան յանուն Տիկին Յուստինեայ Ստեփանեան վասն 25 ռ. նուիրաբերութեան, թ. 1124.

— Օրհնութեան յանուն հոգաբարձութեան ս. Երրորդութեան եկեղեցւոյ, Հայոց Թրեզնոյի վասն հանգանակեալ 50 ռ. 40 կոպ. թ. 1125.

— Օրհնութեան յանուն Արշակայ Տ. Մահաեսեան վասն 64 դ. և 50 ս. նուիրաբերութեան, թ. 1127.

— Օրհնութեան յանուն Մաքսուտի Թագւորեան վասն հանգանակելոյ դ77 դոլար ի նպաստ սովելոցն Վասպուրականի, թ. 1148.

— Օրհնութեան յանուն «Հայաստանի աստղ» ընկերութեան, վասն նուիրաբերելոյ ի նպաստ կարօտելոց Վասպուրականի 7 անգ. ոսկիս. թ. 1182.

— Օրհնութեան յանուն Արմաւիրցի Երիցուհի Անթառամայ Դաւթեանց վասն նուիրաբերելոյ դ1000 ոռոբիս յօգուտ Մ. Աթոռոյ, թ. 1188.


դ.

Հայրապետական պարզեւոք.

Կոնդակի լանջախաչից յանուն Տ. Մարգիս քահանայի Մարտիրոսեան Նիսուիթայ գեղջ (Թ. 948), Տ. Մտեփանոս քահանայի Պալայեան Լուգանոկ քաղաքի (Թ. 950), Տ. Էմմանուէլ վարդապետի Պալեան յերզնկայ (Թ. 955), Տ. Համբարձում քահանայի Վարդանեան ի Նոր Զուղայ (Թ. 1024). Տ. Գարեգին քահանայի Արծրունոց ի Դաւրէժ (Թ. 1032).

— Յանուն Սահակ վարդապետի, որով հրամայեցաւ նմա կրել զծագկեայ փիլոն. Թ. 1039.

— Յանուն Տ. Մկրտչի քահանայի Տ. Յակոբեան ի Նոր Նախիջևան, որով տուան նմա իրաւունք կրել զկամիլաւկայ. Թ. 999.



ՔԱՂԱՔԱԾՔ ՅՈՒՆԻՍ-ՕԴՈՍՑՈՅ ԱԽՆԱԴՐԻ

Ի 18-ի մայիսի Սինոդն հրամայեաց պատուիրել կանսահատորիային Վրաստանի հատուցանել այրուոյն Գրիգորի քահանայի Մատինեանց զոր ինչ հասանելոց է նմա ըստ օրինի և կարճել զայս գործ ի Սինոդիս. Հ. 461.

Ի նմին թուի հրամայեաց, քանզի ըստ յայտարարութեան Յովել վարդապետի սկսեալ է ի Սինոդիս տռանձին գործ զգեղծմանց Մտեփանոս վարդապետի, ուստի կարճել զայս գործ. Հ. 462.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց, զինդիր հաւատարմատարաց Մաստարայ գեղջ թողուլ առանց հետեւացաց, զոր և ծանուցանել նոցա ի ձեռն վանական Կառավարութեան. Հ. 463.